ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 232-Ա

3 օգոստոսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1823-Ա, N 1842-Ա, N 1847-Ա, 2020 թվականի հուլիսի 17-ի N 1878-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 29-31-ն և օգոստոսի 1-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
   1) «Եվրոթերմ» ՓԲԸ՝ ք. Երևան, Ա. Քոչինյան 5.
   2) «Տեքս Ուորլդ» ՍՊԸ՝ ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Երևանյան 6.
   3) «Արթուր Մկրտչյան» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23/89:
2. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) կողմից անձանց ընդունելությունը.
   1) «Կեչի հանգստյան տուն» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Կեչարեցի փող.
   2) «Ռիպա Առողջարան» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Կեչարեցու 2.
   3) «Ծաղկաձորի ստեղծագործական տուն» ՓԲԸ՝ ք. Ծաղկաձոր, Չարենցի նրբանցք 4.
   4) «Կեչառիս Հոթել» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Օրբելի Եղբայրներ 20.
   5) «Ալինա Բագրատյան» Ա/Ձ՝ ք. Ծաղկաձոր, հրապարակին հարող տարածք.
   6) «Արտակ Մանուկյան» Ա/Ձ՝ ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի 1.
   7) «Յուպիտեր Հոթել» ՍՊԸ՝ ք. Ծաղկաձոր, Ծաղկունյանց հրապարակ 1:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 03/08/20 16:10:20 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ